ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Լևոն Հովհաննիսյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Լևոն Հովհաննիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Լևոն Հովհաննիսյանի կենսագրությունը

Ծնվել է 1988թ. մարտի 19-ին, Երևանում:
2005թ. ավարտել է Մոսկվայի հ. 116 միջնակարգ դպրոցը:
2005-2009թթ. սովորել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետում և ստացել բակալավրի կոչում:
2008-2009թթ. եղել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ:
2009-2011թթ. սովորել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի «Տնտեսագիտություն և ֆինանսներ» ֆակուլտետում և ստացել մագիստրոսի կոչում:
2009-2011թթ. աշխատել է «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ում՝ որպես ֆինանսական շուկաներում գործառնությունների բաժնի մասնագետ:
2011-2012թթ. աշխատել է «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ում՝ որպես ֆինանսական շուկաներում գործառնությունների բաժնի առաջատար մասնագետ:
2014-2016թթ. աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչությունում՝ որպես Գանձապետարանի առաջատար մասնագետ:
2016-2017թթ. աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչությունում՝ որպես Գանձապետարանի գլխավոր մասնագետ:
2017-2018թթ. աշխատել է «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում՝ որպես ֆինանսական շուկաներում գործառնությունների բաժնի Գանձապետարանի գլխավոր մասնագետ:
2018.-2021թթ. աշխատել է «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում՝ որպես բանկի իրացվելիության և արժութային դիրքերի կառավարման բաժնի, Գանձապետարանի վերլուծաբան:
2018թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրություններում «Իմ քայլը»կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:
2018թ. հոկտեմբերից – 2019թ. մարտ եղել է Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահը:
2019-2021թթ. եղել է Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը:
2020-2021թթ. եղել է Ամերիկայի Միացյալ Նահանգների զարգացման գործակալության (USAID), Միջազգային կառավարման համակարգերի (Management Systems International) և ՀՀ փոխվարչապետի գրասենյակի համատեղ ծրագրի ղեկավարը (Project Manager):

2021թ. դեկտեմբերի 28-ի ավագանու նիստում նշանակվել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

2022թ. մարտի 17-ին ստանձնել է Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի լիազորությունները:

2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած Երևանի ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

2011թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացել է Ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոններում աշխատելու համար վկայական:
2012թ. «Microsoft Imagine Cup Armenia» մրցույթում, որպես խմբի ղեկավար, ստացել է 3-րդ տեղի մրցանակ:
2016թ. ACI – The Financial Markets Association (Փարիզ, Ֆրանսիա) միջազգային կազմակերպության կողմից ստացել է ACI Dealing– դիլերի որակավորում (Foreign Exchange, Fixed Income, Money Markets,Derivatives, Repos, Asset Liability and Risk Management):
2017թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ստացել է արժեթղթերի և բաժնետոմսերի ռեեստրի վարման և պահառության վկայական:
2019թ. Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարանի (Ռուսաստանի Դաշնություն) և Լյուքսեմբուրգի համալսարանի կողմից կազմակերպված Challenges for Emerging Economy II ամառային դպրոցի մասնակցի վկայական:
Ամուսնացած է, ունի մեկ զավակ: